«Հաղթանակ» կուսակցությունների դաշինք

"Victory"Alliance

Հայերեն՝ ՀԴ, Անգլերեն՝ VA

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Թեկնածու՝ Սևակ Խաչատրյան

ՏԵՍԼԱԿԱՆ

Էջմիածին քաղաքն ու նրան միացած գյուղերը պետք է դառնան համերաշխ, փոխկապակցված և հավասարապես զարգացող համայնք: Ամեն բնակավայր՝ լինի այն մեծ քաղաք, կամ լեռնային փոքր գյուղ պետք է ունենա նույն հնարավորությունները՝ ապրելու, ստեղծագործելու և զարգացնելու սեփական տնտեսությունը:

I. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ

1. Թափանցիկություն և բաց կառավարում
   - Համայնքի բյուջեի բոլոր ծախսերի հրապարակում՝ ամսական հաշվետվությամբ:
   - Առցանց հարթակ, որտեղ յուրաքանչյուր բնակիչ կարող է տեսնել ընթացիկ ծրագրերը, իրենց ֆինանսավորումը և առաջարկել փոփոխություններ:
   - Բոլոր մրցույթների և տենդերների բաց ընթացակարգեր:
2. Մասնակցային կառավարում
   - Յուրաքանչյուր գյուղում ձևավորվող «Գյուղական խորհուրդ», որը կհավաքվի ամիսը՝ մեկ անգամ և համայնքապետարանին կներկայացնի տեղական խնդիրների և առաջարկների փաթեթ:
   - Տարեկան բյուջեի առնվազն 10%-ի ուղղակի բաշխում բնակիչների քվեարկությամբ (մասնակցային բյուջե):

II. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

1. Ճանապարհների հիմնանորոգում
   - Լեռնային և դժվարամատչելի՝ Արագած, Լեռնամերձ, Մոնթեավան գյուղերի ամբողջական ասֆալտապատում, ձմեռային անցանելիության ապահովում:
2. Հասարակական տրանսպորտ
   - Հաճախականության բարձրացում և գիշերային երթուղիներ՝ Էջմիածին–Աղավնատուն–Մրգաստան–Այգեշատ ուղղությամբ:

• Վճարային համակարգի արդիականացում, քարտային վճարումներ և հարմարավետ կանգառներ:

3. Ուսանողական ավտոբուսներ:
   • Հատուկ ուսանողական երթուղիներ՝ Վաղարշապատից և բոլոր գյուղերից դեպի Երևան և մարզային բարձրագույն ուսումնական հաստատություններ:
   • Առավոտյան և երեկոյան հստակ գրաֆիկ՝ համադրված համալսարանների դասացուցակի հետ:
   • Ուսանողների համար սուբսիդավորված, կամ անվճար սակագին՝ համայնքային բյուջեի մասնակցությամբ:
   • Ուղևորների անվտանգությունը վերահսկելու համար՝ GPS վերահսկողություն և ժամանակակից ավտոբուսներ:
4. Կապ և էներգետիկա
   • Բոլոր գյուղերում բարձր արագությամբ ինտերնետ, էլեկտրական ցանցերի արդիականացում:
   • Էլեկտրական հին ցանցերի փոխարինում՝ Դողսում, Հովտամեջում և Շահումյանում:
   • Արևային էներգիայի փոքր կայաններ՝ համայնքային շենքերում և դպրոցներում:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. Ջերմոցային տնտեսությունների խթանում՝ Համայնքի կողմից շինթույլտվությունների արագացված և մատչելի ընթացակարգերի ներդրում:
   • Համայնքային համաֆինանսավորմամբ և արտոնյալ վարկային գծերով ծրագրեր:
   • Մրգաստան, Արշալույս, Այգեշատ, Գեղակերտ գյուղերում բարձր բերքատվության և արտահանման հնարավորություն ունեցող մշակաբույսերի (լոլիկ, վարունգ, կանաչիներ) արտադրությամբ զբաղվող տնտեսությունների աջակցություն:
   • Տեխնիկական խորհրդատվություն և ուսուցում՝ կլիմայի կառավարման, էներգաարդյունավետության, ջրի խնայողության վերաբերյալ:
   • Արևային ջեռուցման համակարգեր՝ ծախսերի նվազեցման համար:
2. Ոռոգման համակարգ
   • Կաթիլային ոռոգման ներդրում, նոր ջրամբարների և պոմպակայանների կառուցում:
   • Ջրային ռեսուրսների միասնական կառավարման ծրագիր՝ հատկապես Գեղակերտ, Այգեշատ, Արշալույս գոտիներում:
3. Գյուղացիական շուկաներ և իրացման ցանց
   • Վաղարշապատի կենտրոնական շուկա՝ մշտական տոնավաճառ և մինի-շուկաներ գյուղերում:

• Արտադրանքի պահեստավորման սառնարանային համալիր, որպեսզի գյուղացին կարողանա իրացնել ապրանքը ոչ միայն սեզոնային գներով:

4. Փոքր ու միջին բիզնես

• Միկրոգրանտներ և արտոնյալ վարկեր՝ մեղվաբուծություն, չրի և պահածոների արտադրություն, գյուղական տուրիզմ:

• Գործարար դասընթացներ և բիզնես-մենթորություն երիտասարդների համար:

IV. ԱՐՑԱԽԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Բնակարանային և հողի տրամադրում

• Չօգտագործվող կամ կիսակառույց բնակարանների վերանորոգում և տրամադրում երկարաժամկետ վարձակալությամբ կամ հետագա սեփականաշնորհմամբ:

2. Աշխատատեղերի ստեղծում

• Նախապատվություն համայնքային ծրագրերում, ջերմոցային տնտեսություններում, սոցիալական և կրթական ոլորտներում:

3. Կրթական և սոցիալական ինտեգրում

• Երեխաների անվճար ուսումնական պարագաներ, լրացուցիչ հարմարվողական դասընթացներ:

• Հոգեբանական աջակցության կենտրոն՝ անհատական և խմբային խորհրդատվությամբ:

V. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. Դպրոցների և մանկապարտեզների բարելավում

• Տաքացման և տեխնիկական հագեցվածության արդիականացում՝ Շահումյան, Հայթաղ, Հովտամեջ, Աղավնատուն գյուղերում:

• Թվային դասարանների ստեղծում, STEM կրթություն

2. Երիտասարդական և մարզական կենտրոններ

• Էջմիածին և Գեղակերտ՝ սպորտային համալիր, արվեստի և տեխնոլոգիաների ակումբներ:

3. Մշակութային վերածնունդ

• Տարեկան «Վաղարշապատի օրեր» փառատոն՝ ներկայացնելով յուրաքանչյուր գյուղի ավանդույթները:

• Գյուղական զբոսաշրջության խթանում, պատմամշակութային վայրերի վերականգնում:

VI. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Շարժական բժշկական ծառայություններ
   - Շաբաթական այցեր դեպի Լեռնամերձ, Մոնթեավան, Արագած:
2. Տուն-օգնություն՝ միայնակ տարեցների համար
   - Կամավորական ցանց և համայնքային սոցիալական աշխատողների մշտական այցելություններ:
3. Աշխատատեղեր՝ խոցելի խմբերի համար
   - Համայնքային ձեռնարկություններ և հասարակական աշխատանքներ՝ կանաչ տարածքների պահպանում, համայնքի բարեկարգում:

VII. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Արևային էներգիայի ծրագրեր՝ համայնքային շենքերում և ջերմոցներում:
- Թափոնների տեսակավորում և վերամշակում, աղբահանության նոր գրաֆիկ՝ հատկապես Դաշտ, Դողս, Ծաղկալանջ գյուղերում:
- Կանաչ տարածքների ստեղծում, ծառատունկեր՝ Էջմիածին, Արշալույս, Մրգաստան գոտիներում:

- Ջրի և հողի պահպանության միջոցառումներ՝ էրոզիայի կանխարգելում, անտառապատման ծրագրեր:

Թափառող կենդանիների աճող թվի խնդիրը լուծելու համար՝ անհրաժեշտ է համապարփակ մոտեցում, ներառյալ ստերիլիզացիան, որին հաջորդում է թափառող կենդանիների բնական միջավայր վերադարձը, ապաստարանի ստեղծումը և հանրային կրթությունը: Բուծման վերահսկողությունը պետք է լինի առաջնային խնդիր:

1. Մասնագիտացված անասնաբուժարանի ստեղծում, վիրահատարանով:
2. Հատուկ ապաստարան վերականգնվող կենդանիների համար:
3. Առնվազն 80% թափառող կենդանիների որս, ստերջացում, վերականգնում:
4. Անբուժելի, կամ վտանգավոր վարակներ կրող կենդանիների քնեցում:
5. Առողջ կենդանիների պատվաստում:
6. Առողջ , պատվաստված և վերականգնված կենդանիների վերադարձ բնական վայրեր:
7. Որդեգրման գործընթացի կազմակերպում:

VIII. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

- Բաց հաղորդակցության հարթակներ՝ Facebook, Telegram հարթակներում, ինչպես նաև՝ ավանդական հանդիպումներ:
- Գյուղ առ գյուղ բաց լսումներ՝ բնակիչների առաջարկների հավաքագրում:
- Կամավորների և երիտասարդների ներգրավում:

Կուսակցության ղեկավար կամ լիազոր ներկայացուցիչ

(ստորագրությունը)

Կ.Տ

(ազգանունը, անունը)